

Կայացավ Գեղարքունիքի մարզի գորակոչային հանձնաժողովի հերթական նիստը

03.03.2017

Մարտի 2-ին Գեղարքունիքի մարզպետարանում կայացավ Գեղարքունիքի մարզի գորակոչային հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզային գորակոչային հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը: Նիստի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԶՈՒ քանակային 2-րդ կորպուսի հրամանատար, գնդապետ Դավիթ Մանուկյանը, ՀՀ ՊՆ ՌՈ Մարտունու բաժնի պետ Անդրանիկ Գյուլբենկյանը, ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արսեն Ադամյանը, տարածքային զինվորական կոմիսարներ, գորակոչային հանձնաժողովի անդամներ: Օրակարգում քննարկվեցին 2017 թվականի ձմեռային գորակոչի արդյունքների և գորակոչային ընթացիկ հարցերի, մարզի զինվորական կոմիսարիատներում 2017 թվականից սկսված կցագրումների հետ կապված խնդիրներ: 2017 թվականի ձմեռային գորակոչի արդյունքների մասին զեկուցեցին Գավառի, Վարդենիսի, Ճամբարակի, Սևանի և Մարտունու զինվորական կոմիսարները: Ըստ զեկուցողների՝ գորակոչի պլանային առաջադրանքը կատարել են Վարդենիսի և Սևանի զինկոմիսարիատները, իսկ մնացած զինկոմիսարիատներում այն կատարվել է պլանային առաջադրանքից պակաս ցուցանիշով: Զեկուցողները խնդիրը պայմանավորեցին տարածքային զինկոմիսարիատներում գրանցված գորակոչային տարիքի երիտասարդների և Հանրապետական զինկոմիսարիատից պլանային առաջադրանքով իջեցված թվերի անհամապատասխանությամբ: Խնդիրը կարգավորելու համար Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի գորակոչային հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը տարածքային զինվորական կոմիսարներին հանձնարարեց՝ մինչև հերթական գորակոչի հետ կապված աշխատանքների մեկնարկը զինկոմիսարիատներում կցագրվածների տվյալները 20 օր առաջ ներկայացնել մարզային գորակոչային հանձնաժողովին՝ դրանք նախապես Հանրապետական զինկոմիսարիատում ունեցած տվյալների հետ համաձայնեցնելու նպատակով: Մարզի զինվորական կոմիսարիատներում 2017 թվականից սկսված կցագրումների աշխատանքների մասին զեկուցեց Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ԱՄԱ վարչության պետ Անուշ Պողոսյանը: Նա նշեց, որ տարածքային զինկոմիսարիատներին կից բժշկական բոլոր հանձնաժողովները ապահովված են համապատասխան մասնագետներով, իսկ կցագրումները ընթանում են սահմանված կարգի համաձայն: ՀՀ ԶՈՒ քանակային 2-րդ կորպուսի հրամանատար, գնդապետ Դավիթ Մանուկյանը տարածքային զինկոմիսարներին առաջարկեց ակտիվ աշխատանք տանել ՀՀ զինված ուժերը պայմանագրային զինվորական ծառայողներով համալրելու ուղղությամբ, ինչը դրականորեն կազդի գորակոչի պլանային առաջադրանքների կատարման վրա, և աշխատանքով կապահովի մարզի երիտասարդներին: «Այս ուղղությամբ հարկավոր է տանել հետեւողական աշխատանք համայնքների ղեկավարների հետ, մարզխորհրդի հերթական նիստում այն դարձնել քննարկման հատուկ հարց: Մեր համայնքներում երիտասարդ տարիքի շատ մարդիկ աշխատանք չունեն, համոզված եմ, որ նրանք պայմանագրային կարգով ծառայելու ցանկություն կունենան», - շեշտեց մարզպետը: Դպրոց-բանակ-հասարակություն կապը ընդլայնելու և ամրապնդելու, ռազմահայրենասիրական դաստիարակությունը ավելի բարձր հիմքերի վրա դնելու նպատակով մարզի գորակոչային հանձնաժողովի նախագահն առաջարկեց՝ մարզի բարձր դասարաններում սովորող ապագա զինվորների համար հաճախակի կազմակերպել այցելություններ մարզի տարածքում տեղակայված զորամասեր՝ նրանց ծանոթացնելով զինվորական կյանքին, զինտեխնիկային և զենքի հետ վարվելու կանոններին: ,, Այդ ավանդույթը մենք արդեն ձեւավորել

ենք վերջին տարիների ընթացքում, պարզապես պետք է շարունակենք եւ առաջ գնանք: Հայոց բանակի ապագա զինվորը պետք է ծանոթանա զենքի հետ ճիշտ վարվելու կանոններին, զինվորական կարգուկանոնին, շփվի Հայոց բանակի զինվորների ու սպաների հետ, համակվի ռազմահայրենասիրական ոգով: Նման այցերը պետք է կազմակերպվեն հաճախակի>>,-նշեց Ռաֆիկ Գրիգորյանը: Ամփոփելով նիստի աշխատանքները՝ մարզպետը հանձնաժողովի անդամներին հրահանգեց՝ շարունակել համագործակցված աշխատանքը եւ վերացնել նկատված յուրաքանչյուր թերացում կամ բացթողում, որոնք ի հայտ են եկել ինչպես կցագրումների, այնպես էլ նախորդ գորակոչի ընթացքում: <<Որպեսզի ամեն մի գորակոչ անցնի սահմանված կարգին համապատասխան, հարկավոր է կատարել միասնական եւ համագործակցված աշխատանք: Ժամանակը մեր առջեւ դնում է նոր պահանջներ, նոր մոտեցումներ նոր անելիքներ, դրա համար էլ մենք պետք է անենք ամենահնարավորը, որպեսզի քայլենք ժամանակի պահանջներին համահունչ, կարողանանք կանխել արտաքին սպառնալիքի ամեն մի փորձ: Մեզ անհարժեշտ են միայն ու միայն առողջ, բարձր զիտելիքներով ու քաջարի ոգով զինված բանակայիներ>>,- ամփոփեց մարզպետ, գորակոչային հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը: